ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԹՆԻԿ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ*

Լիլիթ Դալլաքյան

Բանալի բառեր՝ էթնիկ կոնֆլիկտներ, Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսեթիա, Աբխազիա, ինքնորոշման իրավունք, տարածքային ամբողջականություն, ԵԱՀԿ Մինսկի խումբ, միջազգային իրավունք, միջնորդական առաքելություն:

Միջազգային կազմակերպությունների և, մասնավորապես, ՄԱԿ-ի ստեղծումից հետո պետությունները հույս էին փայփայում, որ ստեղծված միջազգային մեխանիզմները այլևս թույլ չեն տա կոնֆլիկտների և պատերազմների վերսկսում: Սակայն, այսօր դժվար է նշել մի տարածաշրջան, որտեղ չկան կոնֆլիկտներ և դրանց բոլորի հիմքում այս կամ այն չափով ընկած է էթնիկ բաղադրիչը՝ Ուկրաինայից մինչև Կովկաս, Աֆրիկա, Մերձավոր Արևելք: Բոլոր կոնֆլիկտները ունեն իրենց նմանությունները և տարբերությունները, որոնց շարքին են դասվում նաև Կովկասի հակամարտությունները: Այս հոդվածում անդրադարձ է կատարվելու Կովկասյան երեք կոնֆլիկտների՝ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հիմնահարցերին, դրանց ծագումնաբանության նմանություններին և հնարավոր լուծման ուղիներին:

ԽՍՀՄ գործաչովյան վերակառուցման քաղաքականության ի հայտ գալով՝ ժողովուրդներին ընձեռվեցին մինչ այդ արգելված քաղաքական և քաղաքացիական իրավունքներ, ինչը հանգեցրեց էթնիկ գործոնի վերելքին և միութենական հանրապետությունների կողմից ազգային հարցերի բարձրացման: Այնուհետև ԽՍՀՄ փլուզման հետևանքով նախկին ԽՍՀՄ տարածքներում տեղի ունեցավ սառեցված և չլուծված էթնիկ կոնֆլիկտների ակտիվացում՝ Ուկրաինա, Մոլդովա, Ադրբեջան, Վրաստան, Ռուսաստան, Ղրղզստան: Դրանք տարբերությունների հետ միասին ունեն նաև որոշ նմանություններ, որոնք կարելի է տարանջատել հետևյալ կերպ.

1. էթնոազգայնականություն

Կովկասյան երեք կոնֆլիկտներում էլ կա էթնիկ-ազգայնական բաղադրիչ: Իրենց պատմական հայրենիքում բնակվող ժողովուրդները, որոնք լենին-ստալինյան վարչատարածքային բաժանմամբ ներառվել էին մեկ այլ՝ պատմականորեն ոչ բարեկամական և այլ էթնիկ բաղադրիչ ունեցող պետության տարածքում, չէին կարող չփափագել միավորվելու իրենց ազգակիցներին և պատմական հայրենիքին, ինչպես օրինակ՝ Ղարաբաղի դեպքում: Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանին դարձել է արյունահեղ պատերազմների, հազարավոր մարդկանց մահվան, հարևանների միջև ատելության և թշնամության, իսկ ամբողջ Հարավային Կովկասում՝ խաղաղության հաստատման անհնարինության պատճառներից մեկը: Հաշվի առնելով հայ և ադրբեջանցի ժողովուրդների միջև պատմական անցյալը, հայ բնակչության կոտորածները թուրք և ադրբեջանական զինված խմբավորումների կողմից, հայ-թուրքական հարաբերությունների մռայլ անցյալը և թուրք-ադրբեջանական եղբայրությունը, ինչպես նաև Ղարաբաղի բնակչության էթնիկ պատկանելիությունը՝ Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանին, այլ ոչ թե միացումը Խորհրդային Հայաստանին, դիտվում է որպես առավել ոչ տրամաբանական և դիստրուկտիվ քայլ: Բացի պատմական դառը փորձից՝ Լեռնային Ղարաբաղի հայությունը տեսնում էր նաև Նախիջևանի հայաթափումը, Խորհրդային տարիներին Ադրբեջանի կողմից վար-

---

* Հոդվածն ընդունվել է 14.05.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 18.05.21:

վող լեզվի, մշակույթի, կրթության, հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող խտրական և ուծացման քաղաքականությունը, ամեն կերպ Ղարաբաղի տնտեսական զարգացմանը խոչընդոտելը, ինչը չէր կարող վաղ թե ուշ չհանգեցնել կոնֆլիկտի բռնկման: Հարկ է նշել նաև, որ էթնոազգայնականությունը դրսևորվեց այն տարածքներում, որոնք ունեին ինքնավարության կարգավիճակ: Օրինակ՝ Ախալքալաքում, որտեղ հայերը Մառնեուլում, որտեղ ադրբեջանցիները թվաքանակով չէին զիջում օսեթներին և աբխազներին, անջատողական շարժումներ ի հայտ չեկան[1]:

2. ԽՍՀՄ փլուզման հետևանքով քաղաքական անկայունություն

Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությամբ պայմանավորված՝ սկսվեցին բարձրացվել ազգային և էթնիկ հիմնահարցեր, որոնք միշտ էլ եղել են օրակարգում, սակայն փորձ է արվել ժողովուրդների բարեկամության և համաշխարհային սոցիալիզմի կառուցման անվան տակ թաքցնել այդ խնդիրները, ինչի արդյունքում տարիների ընթացքում դրանք ավելի են խորացել: Բացի այդ՝ ԽՍՀՄ վարած քաղաքականությունը էթնիկ հարցերում չէր կարող չհանգեցնել կոնֆլիկտների: Ժամանակին «բաժանիր, որ տիրես կարգախոսը», որի նպատակն էր՝ ստեղծելով անկայունության օջախներ՝ մշտական ազդեցության լծակներ ունենալ միութենական հանրապետությունների վրա, ինչպես օրինակ՝ օս ժողովրդի բաժանումը երկու մասի և մի մասի բռնակցումը Խորհրդային Վրաստանին, կամ Աբխազիան որպես ինքնավար միավոր Վրաստանի կազմում ընդգրկումը այն դեպքում, երբ ի սկզբանե դրանք համարվել են երկու հավասարազոր միութենական հանրապետություններ, հետագայում դարձավ անլուծելի էթնիկ խնդիրների պատճառ: Ժամանակը ցույց տվեց, որ այդ քաղաքականությունը կործանարար դարձավ հենց Խորհրդային Միության համար, քանի որ դրա փլուզման պատճառներից գլխավորը հենց էթնիկ հակամարտությունների բռնկումն էր ԽՍՀՄ ողջ տարածքում, ինչին Խորհրդային Միությունը չէր կարող դիմադրել և առավել ևս լուծում գտնել: Մինչ օրս էլ վերոհիշյալ կոնֆլիկտները լուծված չեն և շարունակում են խլել հազարավոր կյանքեր՝ հարվածի տակ դնելով հարևան ժողովուրդների միջև տևական խաղաղության հաստատումը:

3. Տնտեսական դժվարություններ

Տարիների ընթացքում ԽՍՀՄ տնտեսական մոդելը ապացուցեց իր ոչ մրցունակությունը և նվազ արդյունավետությունը, պատերազմից հետո ռազմարդյունաբերական վերելքին հաջորդեցին լճացման տարիները, էներգակիրներից տնտեսության չափազանց կախվածությունը, փակ սահմանները և խորհրդային ամբողջատիրական համակարգին բնրոշ երկաթյա վարագույրի քաղաքականության իրականացանումը, վերջիվերջո, հանգեցրին առաջին անհրաժեշտության սպառողական ապրանքների դեֆիցիտի՝ աշխարհում ամենահարուստ ընդերքը և ամենամեծ տարածքը ունեցող երկրում: Սա չէր կարող չհանգեցնել կենտրոնական իշխանությունների հանդեպ դժգոհության, իսկ էթնիկ խնդիրների առաշքաշումը դարձավ այդ դրսևորումներից մեկը:

4. Աջակցություն դրսից

ա) Երկրներ, որոնք հանդիսանում են տվյալ էթնիկ խմբի հայրենիքը, օրինակ՝ Լեռնային Ղարաբաղ-Հայաստան. Լեռնային Ղարաբաղի բնակչությունը նույնիսկ ԽՍՀՄ ավտորիտար իշխանության պայմաններում բարձրացնում էր իր պատմական հայրենիքին միավորվելու հարցը: Բնակաբանաբար, երբ անտեսվեցին արցախահության՝ ԽՍՀՄ օրենքներով ինքնորոշվելու իրավունքը, նորանկախ Հայաստանի Հանրապետությունը չէր կարող անմասն մնալ իր հայրենակիցների պայքարից, ինչը դրսևորվեց հազարավոր կամավորականների մեկնումով ռազմաճակատ, ռազմական և տնտեսական ահռելի օգնության տրամադրմամբ:

բ) Երկրներ, որտեղ կա կայացած և զգալի թվաքանակով սփյուռք

Օրինակ՝ Հյուսիսային Օսեթիայի, Ինգուշեթայի աբխազ և օս ժողովուրդները աբխազա-օսեթական կոնֆլիկտի ժամանակ մեծապես ռազմական օժանդակություն են

ցուցաբերել իրենց ազգակիցներին, ինչը բոլորովին զարմանալի չէ:

գ) Երկրներ, որոնք շահագրգռված են տվյալ երկրի թուլացմամբ կամ մասնատմամբ և դրա հանդեպ ազդեցության լծակների պահպանմամբ. Աբխազիա, Օսեթիա-Ռուսաստան

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին Վրաստանը առավել ակտիվ քաղաքականություն էր վարում անկախ պետություն ստեղծելու ուղղությամբ: Այն պարագայում, երբ Աբխազիայի և Օսեթիայի ժողովուրդները քվեարկեցին ԽՍՀՄ կազմի մեջ մնալու օգտին, վրաց ժողովուրդը հանրաքվեի արդյունքում կողմ արտահայտվեց անկախությանը: Այդ պարագայում Ռուսաստանը, չցանկանալով կորցնել իր հետագա ազդեցությունը Վրաստանի նկատմամբ, զգալի քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ կարգի աջակցություն ցուցաբերեց Օսեթիային և Աբխազիային: Անհրաժեշտ է նշել, որ դրսից աջակցությունը, հատկապես՝ որևէ գերտերության կողմից, կոնֆլիկտի կողմերին բանակցային սեղանի շուրջ դարձնում է ոչ ճկուն, ինչպես օրինակ՝ Աբխազիայի և Օսեթիայի դեպքում, երբ ստանալով քաղաքական, տնտսեական և այլ աջակցություն Ռուսաստանի կողմից, կողմերը վստահորեն չէին ընդունում Վրաստանի առաջ քաշած այն պայմանները, որոնք, իրենց կարծիքով, որևէ կերպ կխոչընդոտեին իրենց ինքնորոշման իրավունքի իրացմանը[2]:

Միաժամանակ այս ֆոնին նկատվում է նաև իրական խնդրիների նսեմացում, երբ, կոնֆլիկտի էությունը պարզունակ ձևով վերագրելով միայն դրսի խաղացողներին՝ կենտրոնական իշխանությունները անտեսում են խնդիրների բուն պատճառը՝ փոքրամասնությունների հանդեպ սխալ տնտեսական, սոցիալական քաղաքականությունը և շովինիզմը, ինչպես օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի դեպքում, երբ Ադրբեջանի իշխանությունները փորձում են կոնֆլիկտը ներկայացնել Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ՝ մի կողմ թողնելով պատմության ընթացքում արցախահայության կոտորածները, խորհրդային ժամանակներում իրականացված ուծացման քաղաքականությունը, բռնաճնշումները, խտրականությունը և տնտեսության արդիականացում չիրականացնելը, հայաթափման քաղաքականությունը՝ Նախիջևանի օրինակով և այլն:

5. Ներքին գործոններ՝ փոքրամասնությունների ճնշված լինելը, միաձուլման և շովինիզմի քաղաքականություն [3]

Ժողովուրդների պատմական անցյալը և արդեն ձեռք բերված փորձը դրոշմվում է նրանց հիշողության մեջ, ինչը փոխելը շատ դժվար է և տարիների գործակցություն է պահանջում: Այդ տեսակետից արցախայության պայքարը դիտվում է որպես էքզիստենցիալ վտանգի դեմ պայքար՝ հաշվի առնելով Բաքվի (1918թ.), Շուշիի (1920թ.), հայության կոտորածները, Սումգայիթի (1988թ.) և Բաքվի (1990թ.) հայ բնակչության ջարդերը, ինչպես նաև 1915թ. Հայոց ցեղասպանությունը և Թուրքիայի ներգրավվածությունը ղարաբաղյան կոնֆլիկտի մեջ: Իսկ Վրաստանի նախագահ Գամսախուրդիայի՝ «Վրաստանը վրացիների համար» հայտնի թեզը, անկասկած, իր դերը ունեցավ պատերազմի և առ այսօր չլուծված մեկ այլ էթնիկ խնդրի բռնկման համար:

1994-ից սկսած տեղի ունեցավ կովկասյան վորոհիշյալ երեք կոնֆլիկտի սառեցում, որի հիմնական պատճառներն էին՝

1. Ռեսուրսների սպառումը

Նոր անկախացած սոցիալիստական երկրները բախվեցին մի քանի հրատապ լուծում պահանջող խնդիրների՝ ավերված և ոչ մրցունակ տնտեսություն, էթնիկ կոնֆլիկտներ, անարխիա, կայացած պետական ինստիտուտների բացակայություն, զոհերի մեծ թիվ, տնտեսական ծանր վիճակ, արտաքին աշխարհի հետ նոր քաղաքական և տնտեսական հարաբերությունների ստեղծման և ինտեգրման խնդիրներ[4]: Այս ամենը, ինչպես նաև պատերազմի հետևանքով հումանիտար աղետի սպառնալիքներն ու կորուստները ստիպեցին կողմերին նստել բանակցային սեղանի շուրջ:

2. Միջազգային խաղացողների անտարբերությունը կոնֆլիկտների հարցում

Քանի դեռ գոյություն ուներ ԽՍՀՄ-ը, Արևմուտքի երկրները և ԱՄՆ-ն ամեն կերպ քաջալերում էին ինքնորոշմանը վերաբերող կամ, այսպես կոչված, անջատողական շարժումները՝ քննադատելով ԽՍՀՄ-ին մարդու իրավունքների ոտնահարման և այլախոհների հանդեպ բռնաճնշումների համար: Դա հատկապես ցայտուն էր ղարաբաղյան հակամարտության ֆոնին, երբ Արևմուտքը լայն լուսաբանում և ամեն կերպ աջակցություն էր հայտնում ղարաբաղյան շարժման մասնակիցներին: Սակայն բախվելով սկսված արյունահեղ պատերազմներին՝ Արևմուտքը գիտակցեց, որ պատրաստ չէր տեղում ներգրավվել ռազմական գործողություններին և բավարարվում էր հայտարարություններով և կողմերին ուղղված կոչերով: Իր դերը ունեցավ նաև Բալկանյան պատերազմը, որը, չնայած իր ծավալներով չէր գերազանցում կովկասյան հակամարտություններին, սակայն լինելով անմիջապես Եվրոպայի սրտում՝ ԱՄՆ-ի շահերի համար առավել կենսական նշանակություն ուներ, և բոլոր ջանքերն ուղղվում էին այնտեղ այնահեղության դադարեցման ուղղությամբ: Մյուս կողմից, Ռուսաստանը, լինելով Կովկասյան գերտերություն, սահմանակից լինելով հակամարտող երկրներին և բախվելով չեչենական անջատողականությանը, ստիպված էր լուծում տալ այդ կոնֆլիկտներին՝ իր ներքին և արտաքին անվտանգությունը պաշտպանելու նպատակով:

Գործոններ, որոնք խանգարում են կոնֆլիկտների լուծմանը

1. Միջնորդների շահերի անհամատեղելիություն և բախում[5]

Հարկ է նկատել, որ գերտերությունների ներգրավվումը բանակցային գործընթացում մի կողմից անհրաժեշտ է խնդրի միջազգայնացման և առավել գործուն անվտանգային մեխանիզմների ապահովման համար, սակայն, մյուս կողմից, նրանց շահերի բախումը, ըստ էության, հանգեցնում է կոնֆլիկտի սառեցմանը, քանի որ մի կողմի առաջարկած լուծումը անընդունելի է դառնում մյուս կողմի համար: Կովկասում այնպիսի գերտերությունների շահերի բախումը, ինչպիսին ԱՄՆ-ն և Ռուսաստանն են, նրանց միջնորդական ջանքերը դարձնում է ոչ արդյունավետ՝ տարածաշրջանում մրցակցության և ոչ համատեղ կամ համադրելի շահեր ունենալու պատճառով: 2020 թվականի ղարաբաղյան 44–օրյա պատերազմը, ինչպես նաև Ռուսաստան-Թուրքիա գործակցությունը և Մինսկի խմբին լուսանցք մղելը դրա վառ ապացույցն են:

2. Միջազգային իրավունքի հանդեպ կողմերի անվստահություն

Հաճախ գոյություն ունեցող միջազգային իրավունքի նորմերը ենթարկվում են կողմնակալ մեկնաբանման, և կողմերը սկսում են արդարացիորեն մեղադրել միջնորդներին երկակի ստանդարտներ կիրառելու մեջ[6]: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը ճանաչում է Աբխազիայի և Օսեթիայի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը՝ դա պատճառաբանելով նրանց անվտանգության ապահովմամբ, իսկ Լեռնային Ղարաբաղի խնդրի դեպքում, չնայած պատմության ընթացքում հայ բնակչության բազմաթիվ կոտորածներին և տեղահանումներին և անընդհատ հնչող բնաջնջման սպառնալիքներին, 2020 թվականին խաղաղ բնակչության վրա հարձակումներին և փառքի պուրակում արժանապատվության նսեմացման ցայտուն օրինակներին, արցախահայության ինքնորոշման իրավունքը էքզիստենցիալ վտանգի սկզբունքով չի ընդունվում Ռուսաստանի կողմից. հակառակը՝ հայտարարվում է, որ Ղարաբաղի խնդիրը լուծված է, և Ռուսաստանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Նույնը վերաբերում է ԱՄՆ-ին. ճանաչելով Կոսովոյի անկախությունը որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի արտահայտում՝ չի ճանաչվում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, որը իրականացվել է գոյություն ունեցող բոլոր միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում՝ ԽՍՀՄ գործող օրենքներին ու իրավական այլ ակտերին համապատասխան:

3. Փոփոխություններ տարածաշրջանում

Հատկապես 2020 թվականի ղարաբաղյան 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը փոխվել է, ի հայտ են եկել նոր խաղացողներ՝

ի դեմս Թուրքիայի, Իրանի և Իսրայելի, որոնք փորձում են Ռուսաստանի հետ վերածնել տարածաշրջանը՝ ցանկություն ունենալով դուրս մղել Արևմուտքի երկրները, մասնավորապես՝ ԱՄՆ-ն և Ֆրանսիան, ինչը նրանց հաջողվեց Թրամփի վարչակազմի օրոք: Սակայն Բայդենի վարչակազմը Կովկասը դիտում է որպես իր շահերի համար կենսական նշանակություն ունեցող տարածաշրջան՝ հաշվի առնելով նաև Թուրքիա-Ռուսաստան տանդեմի մերձեցումը, ինչի վառ ապացույցն է ԱՄՆ կողմից 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչումը և Թուրքիայի հանդեպ պատժամիջոցների կիրառումը, ինչպես նաև այնպիսի երկրի ներկայությունը տարածաշրջանում, ինչպիսին Իրանն է:

4. Էթնիկ խնդիրների լուծման բարդություն

Էթնիկ հակամարտությունները առավել դժվար են ենթարկվում կարգավորման, քանի որ տարիներ շարունակ ժողովուրդների մեջ սերմանվում է ատելություն ու անհանդուրժողականություն, և ցանկացած զիջում դիտվում է որպես դավաճանություն: Բացի այդ՝ ոչ ժողովրդավարական երկրներում իշխանությունը պահելը առավել հեշտ է դառնում ազգայնական թեմաներ անընդհատ շահարկելով, քանի որ ժողովուրդները տարածքային և էթնիկ հարցերը առավել ցավոտ են ընդունում և պատրաստ են կրել զրկանքներ: Իշխանությունները դրանով են բացատրում նաև ժողովրդի ծանր սոցիալ- տնտեսական վիճակը, մարդու իրավունքների սահմանափակումները, և ստեղծվում է արտաքին թշնամու կերպար, ինչպես արվում էր, օրինակ, ԽՍՀՄ-ում կամ այսօր՝ Հյուսիսային Կորեայում:

5. Բանակցելու մոտիվացիայի բացակայություն

Սառեցված կոնֆլիկտներում մի կողմին միշտ առավել ձեռնտու է հակամարտության սառեցված վիճակը՝ հաշվի առնելով զիջումների գնալու ցանկության բացակայությունը, մանավանդ երբ ակընկալվող զիջումները ավելին են, քան արդեն ձեռք բերված ստատուս քվոն: Երբեմն էլ մի կողմը մյուս կողմին չի ընկալում որպես բանակցությունների սուբյեկտ՝ համարելով որ էթնիկ փոքրամասնության խնդիր չկա, և կոնֆլիկտը զուտ տարածքային վեճ է երրորդ՝ հրահրող պետության հետ:

6. Նախկինում խաղաղարար գործունեությունների ոչ արդյունավետություն

Օրինակ՝ Աբխազիայում կար ՄԱԿ առաքելություն՝ ուժի չկիրառման մեխանիզմները վերահսկելու նպատակով, սակայն 2008թ-ին Վրաստանը իրականացրեց Աբխազիայի և Օսեթիայի տարածքների ռմբակոծում: Նույնը տեղի ունեցավ ԼՂ- ում, երբ ստորագրվել էր 1994 թ-ի հրադադարի մասին փաստաթուղթ, և բանակցային սեղանի վրա Մադրիդյան սկզբունքներն էին, որոնցից մեկն էլ ուժի չկիրառումն էր: Սակայն դա չխանգարեց Ադրբեջանին վերսկսել պատերազմը, իսկ միջնորդները սահմանափակվում էին միայն հայտարարություններով: Ավելին, նույնիսկ այն դեպքում, երբ տեղում կան ՄԱԿ խաղաղապահ ուժեր, այդ մեխանիզմը երբեմն չեն գործում, ինչպես օրինակ՝ Ռուանդայում, երբ ՄԱԿ խաղաղարարների աչքի առաջ իրականացվում էր մի ամբողջ էթնոսի ցեղասպանություն:

Կոնֆլիկտների լուծման համար կարևոր պայմանները

1. Միջնորդների ընկալումը, որ կոնֆլիկտի լուծումը անհրաժեշտ է իր ազգային շահերի համար[7]:

ԱՄՆ-ն շահագրգռված է Կովկասյան երեք երկրների միջև համերաշխության հաստատմամբ, քանի որ, օրինակ, ցանկանում է ստեղծել էներգետիկ նոր գոտի՝ Ռուսաստանին շրջանցելու և եվրոպական շուկան դիվերսիֆիկացնելու համար՝ մասնավորապես ադրբեջանական գազի շնորհիվ, բացի այդ՝ ԱՄՆ-ն ցանկանում է ազատվել Կովկասում վերջին ռուսական բազայից և նվազեցնել այս երեք երկրների կախվածությունը Ռուսաստանից՝ հետապնդելով աշխարհաքաղաքական նպատակներ: Դա ներառում է նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում, քանի որ թուրքական վտանգի դեպքում է, որ Հայաստանում առավել արժևորվում է ռուսական 102-րդ բազայի առկայությունը: Իր հերթին Ռուսաստանը շահագրգռված է գոյություն ունեցող կոնֆլիկտնե-

րի սառեցմամբ[8], իսկ ապասառեցման դեպքում՝ իր ազդեցության տարածմամբ, ինչպես եղավ 2020 թվականի արցախյան 44-օրյա պատերազմից հետո, երբ Ռուսաստանը իր խաղաղապահ ուժերը տեղակայեց Ղարաբաղում՝ հաշվի չառնելով այն փաստը, որ համանախագահ երկրների միջև մինչ պատերազմը ձեռք էր բերվել պայմանավորվածություն, որ հետագայում տեղակայվելիք ուժերը չպետք կազմված լինեն այդ երեք երկրի զորքերից: Սակայն սկանդինավյան ուժերի տեղակայումը Ղարաբաղում ընդունելի չէր լինի ՌԴ-ի համար, քանի որ մի կողմից սկանդինավյան երկրները ՆԱՏՕ-ի անդամ են և ոչ բարեկամական ՌԴ-ի հանդեպ, մյուս կողմից՝ Ռուսաստանը կկորցներ կոնֆլիկտի կողմերի վրա իր ազդեցության լծակների մեծ մասը: Այդ պատճառով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պատերազմի ընթացքում նշեց, որ առավել նպատակահարմար է համարում ռուսական խաղաղապահ ուժերի տեղակայումը:

2. Միջնորդական առաքելության հարցում կողմերի վստահությունը

Աբխազիայի և Օսեթիայի դեպքում այս խնդիրը դառնում է առավել ցայտուն, քանի որ, օրինակ, Վրաստանի համար անընդունելի է Ռուսաստանի միջնորդական առաքելությունը: Վրաստանը և Արևմուտքը ՌԴ-ին մեղադրում են Վրաստանի տարածքները օկուպացնելու[9], իսկ մինչ 2008 թվականի ռուս-վրացական պատերազմը անջատողականներին զինելու, նրանց քաղաքացիություն շնորհելու և կոնֆլիկտը Վրաստանի սուբյեկտայնության դեմ օգտագործելու մեջ: Իր հերթին Օսեթիայի և Աբխազիայի իշխանությունները մեղադրում են ժնևյան գործընթացի մյուս կողմերին՝ ԵՄ և ԱՄՆ-ին, Վրաստանի տարածքային ամբողջականությունը պաշտպանելու և իրենց պահանջներն ու շահերը հաշվի չառնելու մեջ[10]:

3. Առավել ուժեղ կողմի կոնստրուկտիվ քայլերը, քանի որ որպես կանոն՝ տնտեսապես առավել զարգացած և ռազմական առումով գերհագեցած կողմն է սկսում պատերազմական գործողությունները:

Տարիներ շարունակ Ադրբեջանը իր էներգակիրներից ստացված գումարներն ուղղել է բանակի զինմանն ու արդիականացմանը: Հասկանալով, որ շրջափակման պայմաններում Հայաստանի տնտեսությունը չի կարող մրցել իր տնտեսության և բանակի զինման ցուցանիշների հետ՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը սկսեց պատերազմական գործողությունները՝ հարցականի տակ դնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների կողմից իրականացվող միջնորդական ջանքերը: Այդօրինակ քաղաքականություն էր որդեգրել նաև Վրաստանը, երբ Արևմուտքից ստանալով զգալի ռազմական տեխնիկա և բարելավելով իր տնտեսական ցուցանիշները՝ նախահարձակ եղավ՝ հաշվի չառնելով առավել հզոր ուժի՝ Ռուսաստանի միջամտության հավանականությունը և դրա հետևանքները:

4. Կողմերի զինաթափում և ռազմական հավասարակշռության պահպանություն

Տասնամյակներ շարունակ Ադրբեջանը և Հայաստանը իրենց հնարավորությունների չափով ահռելի միջոցներ են տրամադրել ռազմական նպատակների համար: Սակայն, քանի որ, օրինակ, Հայաստանի դեպքում պետական բյուջեն անհամեմատելի է ադրբեջանական ռազմական ծախսերի հետ, տեղի է ունեցել Ադրբեջանի գերզինում: Մյուս կողմից կարևոր է նաև միջնորդ երկրների դիրքորոշումը՝ դարաբաղյան հակամարտության մեջ ընդգրկված Հայաստանին և Ադրբեջանին զենք չվաճառելու վերաբերյալ, քանի որ բանակցային գործընթացը և զինումը անհամատեղելի գործընթացներ են: Սակայն, ԼՂ-ի դեպքում այդ մեխանիզմը չաշխատեց, քանի որ ՌԴ-ն զենք էր վաճառում կոնֆլիկտի երկու կողմերին՝ և՛ Հայաստանին, և՛ Ադրբեջանին՝ Հայաստանին հայտարարելով, որ դա ռազմական հավասարակշռության պահպանման համար է՝ հաշվի չառնելով այն հանգմանքը, որ Ադրբեջանը ակտիվորեն զինում է իր բանակը նաև այլ երկրների արտադրության զենքերով:

5. Աջակցություն կողմերին տնտեսական, սոցիալական, մարդու իրավունքների ոլորտում

Փորձը ցույց է տալիս, որ արևմտյան երկրներում, որտեղ կենսամակարդակը բարձր է, զարգացած են քաղաքացիական հասարակության ինստիտուտները, հարգվում են մարդու իրավունքները, տարածքային և էթնիկ խնդիրները բացակայում են, քանի որ շատ հաճախ դրանց արծարծումը շեղող փորձ է՝ երկրի իրական խնդիրների լուծման համար: Օրինակ, Ադրբեջանի դեպքում նավթի գնի նվազման, իշխանության փոխանցման հարցի և մարդու իրավունքների զանգվածային ոտնահարման և իրական ժողովրդավարության բացակայության պայմաններում նախագահ Ալիևի պատերազմական հռետորաբանությունը առավել սաստկացավ: Թերևս միանման գործընթացներ էին ընթանում Հայաստանում: Տարիներ շարունակ տնտեսական ոչ բավարար ցուցանիշների ֆոնին և ընդդիմության բողոքի ակցիաներին զուգահեռ իշխանության կողմից հնչում էին «թշնամու ջրաղացին ջուր չլցնելու» կոչեր, լռեցվում էին մարդու իրավունքների, ժողովրդավարության ոլորտում հետընթացը, տնտեսական անհաջողությունները՝ արտաքին ճակատում և, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի խնդրում՝ դիրքերը չթուլացնելու պատճառաբանությամբ:

6. Գիտակցումը, որ կոնֆլիկտը չի կարող լուծվել ռազմական ճանապարհով

Տարիներ շարունակ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ջանքեր են գործադրում ղաբաղյան կոնֆլիկտի խաղաղ լուծման համար, կազմակերպում հանդիպումներ և քննարկումներ, ստորագրվում են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման մասին համաձայնագրեր, սակայն, ինչպես օրինակ, ԼՂ կոնֆլիկտի դեպքում, շփման գծի երկայնքով տեղի են ունենում հրադադարի ռեժիմի խախտումներ, իսկ 2020 թվականին Ադրբեջանը ցույց տվեց, որ առոչինչ է համարում մոտ երեք տասնամյակ ընթացող բանակցությունները և լայնածավալ պատերազմ սկսեց արցախահայության դեմ: Այդօրինակ իրադարձություններ տեղի ունեցան նաև Աբխազիայում և Օսեթիայում, երբ վրացական իշխանությունները գիշերը սկսեցին ռմբակոծել խաղաղ բնակավայրերը 8-խինվալիում՝ անտեսելով 1994 թվականից մեկնարկած բանակցությունները և ժնևյան ձևաչափը: Այլ հարց է, որ համապատասխան բանակցությունները երբեմն մտնում են փակուղի և միջնորդների խնդիրն է առարկայան բանակցություններով մոտեցնել հակամարտող կողմերի տեսակետները, այլ ոչ թե ձգձգել բանակցային գործընթացը՝ փաստացի սառեցնելով կոնֆլիկտը՝ կամա թե ակամա, պայմաններ ստեղծելով մի կողմի, որպես կանոն առավել զինված, ագրեսիվ գործողությունների համար:

7. Ամեն ինչ կամ ոչինչ կարգախոսից հրաժարումը

Ղարաբաղյան կոնֆլիկտը ցայտուն օրինակ է, թե ինչպես են ռևանշիստական և «ոչ մի թիզ հող» կարգախոսները հանգեցնում արյունալի պատերազմների՝ խլելով հազարավոր կյանքեր, ոչնչացնելով տարիների ընթացքում ձեռք բերված տնտեսական և սոցիալական հաջողությունները՝ կողմերին առավել հեռու պահելով խնդրի լուծումից: 2020թ. ղարաբաղյան պատերազմից հետո նշվում էր, որ անհրաժեշտ էին զիջումներ և այդ դեպքում այսպիսի աղետալի հետևանքներ չէին լինի: Սակայն, երբ խոսք էր գնում բանակցությունների և փողզիջումներով խնդիրը լուծելու մասին, անմիջապես առաջ էին բերվում «քիրվայության», «արյան ծով դարձնելու» մասին կեղծ օրակարգեր: Իր «-Պատերազմ թե խաղաղություն»հոդվածում[11] ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը լավագույնս նկարագրել է այն հետևանքները, որոնք կարող էին լինել ղարաբաղյան հակամարտության սառեցման դեպքում, սակայն նրան մեղադրեցին չափազանց զիջողականության և հողեր հանձնելու մեջ: Իսկ այժմ խոսվում է, թե զիջումներով հարցի լուծումը կկանխեր 2020թ. 44-օրյա պատերազմի հետևանքները:

8. Բնակչությանը խաղաղության նախապատրաստելը և երկարատև բանակցությունների պատրաստ լինելը

Յուրաքանչյուր իշխանության խնդիրն է բացատրել հասարակությանը, որ ռազմական ճանապարհով լուծում գոյություն չունի և անհրաժեշտ է պատրաստ լինել խաղաղության, քանի որ հարևաններին չեն ընտրում, և Ադրբեջանն ու Թուրքիան ոչ մի տեղ

չեն անհետանալու մեր տարածաշրջանից: Սակայն սա չի նշանակում, որ պետք է անտեսել սեփական շահերը և գնալ միակողմանի զիջումների՝ դա բացատրելով խաղաղասիրությամբ: Փորձը ցույց է տալիս, որ արժանապատիվ խաղաղությունը ավելի գերադասելի է կործանարար պատերազմից, և անհրաժեշտ է ուժեղացնելով տնտեսությունը, քաղաքացիական ինստիտուտների կայացումը, բանակցային գործընթացում սեփական դիրքերը՝ գնալ արժանապատիվ խաղաղության: Մյուս կողմից անհրաժեշտ է, որպեսզի միջնորդները բանակցային գործընթացը դարձնեն առավել առարկայական և գործուն մեխանիզմներ ապահովեն ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման համար: 2020 թվականի դարաբաղյան 44-օրյա պատերազմը հօդս ցնդեցրեց Մինսկի խմբի բոլոր ջանքերը՝ կասկածի տակ դնելով միջնորդական առաքելության արդյունավետությունը: Այժմ մեծ ջանքեր կպահանջվեն նրանցից ոչ միայն կողմերին կրկին բանակցային սեղանին նստեցնելու, այլև միջնորդների հանդեպ կորցրած վստահությունը վերականգնելու և բանակցային գործընթացը շարունակելու համար:

Ելնելով վերոնշյալ փաստերից՝ ակնհայտ է, որ էթնիկ խնդիրների լուծումը պահանջում է դրանց համակողմանի վերլուծություն, տարբեր մոտեցումների մշակում, գործուն մեխանիզմների ներդրում, կողմերի անկեղծ ցանկություն գտնելու խաղաղ լուծում՝ հասկանալով, որ այլընտրանքը կործանարար պատերազմն է, որի պարագայում Կովկասը կդառնա անկայունության և հակամարտությունների գոտի, ինչը անկասկած երկարաժամկետ կտրվածքով սպառնում է նաև միջազգային խաղաղությանը՝ իր հետ բերելով, մասնավորապես, հումանիտար աղետ, փախստականների խնդիր, ահաբեկչական վտանգներ և այլ սպառնալիքներ: Այսօր, առավել քան երբևէ, Կովկասը կանգնած է ընտրության առջև. դառնալ հակամարտությունների թատերաբեմ, թե անվտանգության և խաղաղ գոյակցության կզոյակ աշխարհում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Фарид Шафи: Изменчивая динамика конфликтов в Грузии, сложное переплетение внешных и внутренных факторов//, Центральная Азия и Кавказ, Москва Выпуск 3-4, стр. 145, 2015.
2. **Трейси Джерман:// Абхазия и Южная Осетия : столкновение российских и грузинских интересов, стр.5, Paris, 2006.**
3. **Alexandros Petersen: The 1992-93 Georgia-Abhkazia war: a forgotten conflict. //Caucasian review of international affairs, Autumn 2008.**
4. Sergey M. Markedonov, Maxim A. Suchkov: Russia and the United States in the Caucasus: cooperation and the competition //Caucasus Survey, 2020.
5. Самуэль Чарап, Кори Вельт:// План первоочередных шагов по преодолению последствий грузинских конфликтов, Институт международных исследований, МГИМО (У) МИД России Центр проблем Кавказа и региональной безопасности, июнь 2011, выпуск 3 (27), стр. 6.
6. **Andrew S. Bowen, Cory Welt: //Russia: Foreign Policy and U.S. Relations, Congressional Research Service R46761, 2021.**
7. International Alert 2009, London,// Диалоговый процесс по гарантиям безопасности в контексте грузино-абхазского конфликта.
8. James Nixey: //The South Caucasus: drama on three stages, Chatham House 2010.
9. Գրիգոր Բալասանյան, //ԱՄՆ, ԵՄ և ՌԴ-ն հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման գործընթացում, ԵՊՀ հրատարակչություն,Երևան

2016, էջ 131:
10. Իզիդա Ճանիա, // Աբխազիա. Ռուսաստանի կողմից ճանաչումը սպառնում է վերածվել տնտեսական ներխուժման, Անալիտիկոն N 6 (18), հունիս 2010:
11. Լևոն Տեր-Պետրոսյան. //«Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը», նոյեմբերի, Երևան, 1997:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հարավկովկասյան էթնիկ հակամարտությունների ծագումնաբանությունը և դրանց լուծման բանալիները

Լիլիթ Դալլաքյան

Հոդվածում բազմաթիվ փաստերի վերլուծությամբ փորձ է արվել բացահայտել էթնիկ կոնֆլիկտների և մասնավորապես Լեռնայի Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հակամարտությունների ծագման պատճառները, դրանց նմանությունները, զարգացման փուլերը և բանակցային ներկայիս իրավիճակը: Փորձ է արվել գտնել դրանցում միջնորդական առաքելությունների անհաջողության պատճառները և վեր հանել լուծման հնարավոր տարբերակներ: Արվել է կարևոր եզրակացություն, որ Հարավային Կովկասի ժողովուրդները երկար և բարդ բանակցային ճանապարհ պետք է անցնեն հակամարտությունների լուծման համար, այլապես տարածաշրջանը կդառնա արյունալի բախումների ու անկայունության թատերաբեմ:

РЕЗЮМЕ

Природа этнических конфликтов на Южном Кавказе и ключи к их урегулированию

Лилит Даллакян

Ключевые слова: этнические конфликты, Нагорный Карабах, Южная Осетия, Абхазия, право на самоопредиление, территориальная целостность, Миская группа ОБСЕ, международное право, посредничество.

В статье делается попытка выявить причины возникновений этнических конфликтов, в частности, конфликтов в Нагорном Карабахе, Абхазии и Южной Осетии, их сходства, этапы развития и текущее состояние переговорных процессов. Подробно описаны причины недостаточной эффективности посреднических миссий, а также выявлены возможные решения. Был сделан вывод, что народы Южного Кавказа должны пройти долгий и трудный переговорный процесс для разрешения конфликтов, иначе регион станет ареной для кровавых столкновений и нестабильности.

SUMMARY

The origin of the ethnic conflicts in South Caucasus and the keys to their settlement

Lilit Dallakyan

Keywords: ethnic conflicts, The Hagorno Karabakh, South Ossetia, Abkhazia, right of self-determination, territorial integrity, OSCE Minsk Group, international law, mediation.

The article analyzes the origins of ethnic conflicts, particularly the reasons of the Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia conflicts, their similarities, the stages of development, the current process of negotiations. It has been concluded that the nations of the South Caucasus must go through a long, difficult negotiation process to resolve the issues, otherwise the region will become a stage for bloody conflicts and instability.